# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## Պոդոլսկ (Ռուսաստանի Դաշնություն) և Վանաձոր (Հայաստանի Հանրապետություն) քաղաքների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու մասին

Պոդոլսկ և Վանաձոր քաղաքների ղեկավարությունը, առաջնորդվելով իրենց քաղաքների բնակչության բարիդրացիական հարաբերությունների ամրապնդելու և բազմակողմանի կապերը զարգացնելու ձգտմամբ, որոշեցին հաստատել բարեկամական կապեր Պոդոլսկ և Վանաձոր քաղաքների միջև:

Պոդոլսկ քաղաքի ղեկավարությունը և Վանաձորի քաղաքապետարանը գտնում են բազմակողմանի համագործակցության անհրաժեշտությունը այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են տնտեսությունը, առևտուրը, գիտությունը, մշակույթը, կրթությունը, արվեստը, սպորտը և տուրիզմը: Սույն պայմանագրի հիման վրա բոլոր բնագավառներին վերաբերող պատվիրակությունների փոխայցելությունները մշտապես կիրականացվեն երկու քաղաքների միջև՝ հետևյալ պայմաններով. ընդունող կողմը իր վրա է վերցնում պատվիրակության հյուրընկալության ծախսերը (հյուրանոց, սնունդ, ազատ ժամանց, տրանսպորտային), բացառությամբ Վանաձոր և Պոդոլսկ քաղաքների միջև ընկած ճանապարհածախսի:

Վանաձոր և Պոդոլսկ քաղաքների բարեկամության մասին սույն պայմանագիրը կազմված է երկուական օրինակից՝ հայերեն և ռուսերեն լեզուներով՝ ստորագրված Պոդոլսկ քաղաքում «___»__________2004թ.

Պայմանագիրը ուժի մեջ է ստորագրման պահից:

| | |
|---|---|
| Պոդոլսկի քաղաքագլուխ | Վանաձորի քաղաքապետ |
| ________ Ա. Ս. ՖՈԿԻՆ | ________ Ս. Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ |